ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 483-Ա

01 սեպտեմբերի 2025 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԾՎԱՆԻՍՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԴՊՐՈՑԻ ԱՊՐԱՆՔԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արծվանիստի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի փոփոխության պատճառով դպրոցի ապրանքանյութական արժեքների հանձնում-ընդունումը սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովի նախագահ Գևորգ Գևորգյանին՝ ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման աշխատանքներին ընդգրկել նաև դպրոցի նյութական պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը հինգ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ:

01.09.2025

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2025 թվականի սեպտեմբերի 01 -ի
N 483-Ա որոշման

ԿԱԶՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԾՎԱՆԻՍՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԴՊՐՈՑԻ ԱՊՐԱՆՔԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Գևորգ Գևորգյան	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ, հանձնաժողովի նախագահ
Դավիթ Սահակյան	-Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ
Արփիկ Ռամազյան	-հանձնող
Կարինե Մանուկյան	-ընդունող
Արփիկ Սիրականյան	-հաշվապահ

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098
2025-09-01 17:16:09 GMT+4
Հավաստված է ԷԿԵ-ով

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ